ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Արևելագիտության ամբիոն

# ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԵՐԵՎԱՆ – 2019-20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I.

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ.............................3
1. Ընդհանուր դրույթներ..............................................................................4
2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը ....................................4
*2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները* ..........................................4
*2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները* ..............................6
*2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը* ..........................................8
3. Դասընթացները և կրթական մոդուլները...................................................8
4. Կրեդիտների հատկացումը.......................................................................9
5. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները .......................................9
6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը..................................10
*6.1. Համակարգի հիմնադրույթները* .........................................................10
*6.2. Գնահատման մեթոդաբանությունը* ....................................................11
*6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը* ..........................14
*6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը* ..................................................15
*6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը* ..............................................16
*6.6. Ուսման առաջադիմությունը* .............................................................18
7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը .......................... 19
8. Մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը ...........................................................21
9. Մագիստրոսի ծրագրի հետազոտական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը ...........................................................23
10. Դասընթացների տեղեկագիրքը ...............................................................23
11. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը ....................................24
12. Կրեդիտների փոխանցումը ...................................................................27
13. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը.......................................28
14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները ...............................28
15. Եզրափակիչ դրույթներ.........................................................................29
ԲԱԺԻՆ II.

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ..........................................................30
Մաս I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ............................................................30
1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը.........................................................31
2. Ծրագրի բովանդակությունը....................................................................32
2.1. *Ուսումնական կառուցամաս* .................................................................32
2.2. *Հետազոտական կառուցամաս* ...............................................................36
Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ............................................... 37
1. Տեղեկագրքի նպատակը........................................................................ .. 38
1. Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ....................................... ... 39
2. Լրացական դասընթացներ ................................................................... .. 46
3. Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ.......................................77
4. Կամընտրական դասընթացներ ............................................................. 135
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.......................................................................................211

# I ԲԱԺԻՆ

## ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
## ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ
## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
## ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

1. 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ (այսուհետ՝ Կենտրոն) մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման միասնական կանոնները:

1.2. Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը:

1.3. Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը:

**2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը**

*2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները*

Համաեվրոպական ECTS[1] կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են Կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրում:

1. *Կարողությունը* գիտելիքի, իմացության և ունակությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր:

2. *Կրթական արդյունքն* այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

[1] Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ:

3. *Կրթական (ուսումնական) մոդուլը* ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները ուսանողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

4. *ECTS կրեդիտը* դասընթացն (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

5*. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.*

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,
- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),

- կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

6. *Կրեդիտային համակարգը* ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

7. *Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը* միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

8. *ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.*

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

### *2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները*

2.2.1. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) *կրեդիտների փոխանցում.*

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) *կրեդիտների կուտակում.*

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի ուսումնառության անհատական ծրագրի օգնությամբ:

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

2.2.2. *Կրեդիտների փոխանցման* գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ,կրթական մոդուլներ, ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք)արտահայտող ECTS կրեդիտներով,
- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

2.2.3. *Կրեդիտների կուտակման գործառույթի* հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,

- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ)դասախոսի նախապատվությունից,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

2.3. *Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը*

1. Կենտրոնում մագիստրոսի կրթական աստիճաններում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ըստ այդմ, կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 16 շաբաթ:
4. Ուսանողի շաբաթական ուսումնական լսարանային լրիվ բեռնվածությունը 14-18 ժամ է[2]:
5. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:
6. Որոշ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:
7. Մագիստրոսի՝ 2 տարի ուսման տևողության դեպքում կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 120 կրեդիտ է, և առնվազն 90 կրեդիտ՝ 1,5 տարի ուսման տևողության դեպքում:

**3. Դասընթացները և կրթական մոդուլները**

[2] Առանց լրացական դասընթացների

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին։
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների։
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ամրագրված է մագիստրոսի կրթական ծրագրում, ուսանողը դրանք ընտրում է առաջարկվող ցանկից։

**4. Կրեդիտների հատկացումը**

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից։
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև միարժեք կապ չկա։ Կրեդիտների թիվը, ինչպես արդեն նշվել է, կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներից և այլն։
3. Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որ դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին։
4. Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները պետք է ներկայացվեն ամբողջական թվերով։

**5. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները**

1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար Կենտրոնի ուսանողը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական

բեռնվածություն՝2 տարի ուսման տևողությամբ և (կամ) առնվազն 90 կրեդիտ՝1,5 տարի ուսման տևողությամբ:

2. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն առնվազն 6 կրեդիտ՝ *ընդհանուր դասընթացների կրթամասից*, և 50 կրեդիտ՝ *հետազոտական կառուցամասից (ներառյալ՝ մագիստրոսական թեզը):*
3. Մնացած կրեդիտների (մինչև 64) բովանդակային կազմը սահմանվում է մասնագիտական պարտադիր կրթամասով և կամընտրական դասընթացներով՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր ծրագրի համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 18 կրեդիտ հատկացվում է կամընտրական դասընթացների ձևով որոշակի ուղղությամբ անհատական ուսուցում իրականացնելու համար):

## 6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

### *6.1. Համակարգի հիմնադրույթները*

1. Կենտրոնում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն

աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝

գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում՝ հաշվի առնելով դասահաճախումները:

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ, թեստեր, նախագծեր, անհատական աշխատանքներ և այլն),

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,

դ) ստուգման արդյունքների ինտեգրում` դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) *եզրափակիչ գնահատումով դասընթացներ*,

բ) *առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ*:

**6.2. Գնահատման մեթոդաբանությունը**

6.2.1. Մագիստրոսի կրթական ծրագրում ներառված բոլոր դասընթացները եզրափակիչ գնահատումով դասընթացներ են:

1. Դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն, որոնցից առնվազն մեկն անց է կացվում ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման (թեստերի, անհատական աշխատանքների, նախագծերի և այլն) գնահատման հիման վրա: Եզրափակիչ քննության ձևը դասընթացը կազմակերպող դասախոսի առաջարկությամբ հաստատում է ամբիոնի վարիչը:
2. Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Գ_{\text{արդ.}}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության ակտիվության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Գ_{\text{մաս.}}$ միավորը որոշվում ***աղյուսակ 1-ում*** բերված սանդղակի չափանիշներին համապատասխան (ուսումնառության անհատական ժամանակացույցով սովորող ուսանողի՝ դասընթացի մասնակցության համար տրվող միավորների քանակը հաշվարկվում է նրա ինքնուրույն աշխատանքի կատարողականի հիման վրա).

*Աղյուսակ 1.*

| Մասնակցության աստիճանը (%) | Հատկացվող միավորը |
|---|---|
| 91-100 | 2 |
| 81-90 | 1,5 |
| 71-80 | 1 |
| 61-70 | 0,5 |
| < 60 | 0 |

*Օրինակ 1. Եթե 32 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի*

*15 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝*

[ 1- 15/32 ] x 100% = (1-0.47) x 100% = 53%

*Համաձայն աղյուսակի՝ $Գ_{մաս.}$ = 0 միավոր:*

*Օրինակ 2. Եթե 64 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 12 ժամ անհարգելի և 4 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝*

[1- 12/(64-4) ] x 100% = (1-0.2) x 100% = 80%

*Համաձայն աղյուսակի՝ $Գ_{մաս.}$ = 1 միավոր:*

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների (գրավոր աշխատանք և բանավոր ներկայացում), կամ 1 ընթացիկ (միջանկյալ) և թեստ[3], նախագիծ, անհատական աշխատանք) արդյունքներից ($ΣՔ_{ընթ.}$), որոնց հատկացվող միավորների առավելագույն քանակը սահմանվում է 8,

գ) եզրափակիչ քննության արդյունքից ($Ք_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

[3] Թեստային առաջադրանքի գնահատման քայլը առնվազն 0,1 միավոր

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \sum Ք_{ընթ.} + Ք_{եզր.} :$$

Ըստ այդմ, մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով) [4].

*Աղյուսակ 2.*

| Գնահատման բաղադրամասը | $Գ_{մաս.}$ | $Ք_{ընթ.}1$ | $Ք_{ընթ.}2$ | $Ք_{եզր.}$ | $Գ_{արդ.}$ |
|---|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 8 | | 10 | 20 |

3. Ընթացիկ գնահատման ձևերի միջև միավորների բաշխման քանակական հարաբերակցությունը որոշում է դասընթացը վարող դասախոսը, ինչը պարտադիր կերպով արձանագրվում է մագիստրոսական ծրագրի ուսանողի ուսումնառության ուղեցույցում զետեղված դասընթացի նկարագրության մեջ (դասընթացի ընթացիկ գնահատման կառուցվածքի փոփոխություն ուղեցույցի հրապարակումից հետո չի թույլատրվում):
4. Գնահատման վերը նկարագրված եղանակը կիրառվում է միայն ուսումնական կառուցամասի բաղկացուցիչ դասընթացների, (բացի լրացական դասընթացներից) գնահատման համար: Հետազոտական կառուցամասի մոդուլները, այդ թվում նաև պրակտիկաները, գնահատվում են ստուգարքի ձևով: Մագիստրոսական ատենախոսությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով՝ սույն կարգում բերված գնահատման չափանիշներին համապատասխան:

***6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը***

---

[4] Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը՝ առնվազն 0.5 է

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):
2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ամբիոնները, և հաստատում է ուսումնական մասի պետը: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնական մաս:
3. Ընթացիկ քննությունները կամ դրանց հավասարեցված առաջադրանքներն անց են կացվում ուսումնառության կիսամյակի 7÷8-րդ և 15÷16-րդ շաբաթներում:
4. Լրացական դասընթացներից ընթացիկ ստուգումներն անց են կացվում յուրաքանչյուր 8 շաբաթը մեկ: ( Ընթացիկ ստուգումն անց է կացնում տվյալ առարկան դասավանդող դասախոսը՝ առարկայի՝ դասացուցակով հատկացված ժամերին (ուսանողը չի ազատվում դասերից):
5. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 17÷20-րդ շաբաթներում:
6. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է ամբիոն:
7. Քննության գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև՝ուսումնական մասի պետին:

*6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը*

1. Կենտրոնում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 3.

| Գնահատման արդյունարար միավորը | Գնահատականը |
|---|---|
| 18-20 | «Գերազանց» |

| | |
|---|---|
| 13-17 | «Լավ» |
| 8-12 | «Բավարար» |
| 0-7 | «Անբավարար» |
| 0 | Չներկայացած |
| - | «Ստուգված»/ «Չստուգված» |

Դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը օրինակ՝ 18 (գերազ.)):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «Չստուգված», կրեդիտներ չեն տրվում:«Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին *վարկանիշային միավորներ*[5] չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) վրա:

### *6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը*

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար Կենտրոնի ուսումնական մասը, ամբիոնի հետ համատեղ յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են *ակադեմիական տեղեկագիր*[6], որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:
2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա

[5] Վարկանիշային միավորի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը

[6] Ակադեմիական տեղեկագրի օրինակը կցված է սույն կարգին (հավելված 3):

ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները[7]
   - *գումարային կրեդիտների* քանակը,
   - *գնահատված կրեդիտների* քանակը,
   - *վարկանիշային միավորները*,
   - *միջին որակական գնահատականը*:

4. *Գումարային կրեդիտը* (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

5. *Գնահատված կրեդիտը* (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

**ԳԿ=Σ Կրեդիտ**

6. *Վարկանիշային միավորը* (ՎՄ) հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

**ՎՄ=Σ (Կրեդիտ x $Գ_{արդ.}$)**,

որտեղ $Գ_{արդ}$-ը տվյալ ուսումնական մոդուլից կամ առանձին դասընթացից ստացված արդյունարար գնահատականն է:

[7] Տե՛ս հավելված 3 ակադեմիական տեղեկագիրը:

*Օրինակ, եթե ուսանողը 5,4, և 6 կրեդիտանոց դասընթացից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12,16, և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝*

***ՎՄ= 5 x 12 + 4 x 16 + 6 x 19 = 238՝300** հնարավորից (**5 x 20 + 4x 20 + 6 x 20**)*

7. *Միջին որակական գնահատականը* (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

*ՄՈԳ= ՎՄ/ ԳԿ*

*Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝*

***ՄՈԳ= 238/15 = 15,87***

*20 հնարավորից:*

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունարար* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

### *6.6. Ուսման առաջադիմությունը*

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ *առաջադիմող*, *փորձաշրջանի կարգավիճակում գտնվող* և *հեռացման ենթակա*:

2. Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե՝

ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն(10% թույլատրելի շեղումով),

բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների[8] կրեդիտները:

3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը, և ռեկտորատի կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին):
4. *Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող* ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
5. Մագիստրոսի ծրագրում ուսանողին կարող է տրվել նաև լրացուցիչ ժամանակ՝ դասընթացը կրկնելու համար:
6. *Փորձաշրջանի կարգավիճակում* գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ:
7. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով, իսկ միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողներինը՝ վարկանիշային միավորներով:

**7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը**

1. Դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս հաշվի չեն առնվում հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը կամ դիմումը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնական մասում

[8] Տե՛ս դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ:

գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

3. Ընթացիկ (միջանկյալ) քննությունների կամ ստուգումների արդյունքների վերահանձնում, այդ թվում նաև ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, չի թույլատրվում:
4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունը/ստուգումն ընկած ժամանակահատվածում (համապատասխանաբար, 2-րդ ընթացիկ քննությունը՝ մինչև եզրափակիչ քննությունը, իսկ 2-րդ ընթացիկ ստուգումը՝ մինչև քննաշրջանի սկիզբը)՝ նախապես այն համաձայնեցնելով ուսումնական մասի և դասընթացը վարող դասախոսի հետ:
5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է վերահանձնել այն:
6. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 2 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝*

$$Գ_{արդ.} = 2 + 1 + 2 + 2 = 7,$$

*որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունարար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 2 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա*

$$Գ_{արդ.} = 7 + (5 - 2) = 10:$$

7. Եթե մագիստրոսական ծրագրում դասընթացի գնահատման արդյունարար միավորը գտնվում է 5÷7 միավորի տիրույթում, ապա

թույլատրվում է դասընթացի վերահանձնում նախորդ կետում բերված պահանջներին համապատասխան, ընդ որում՝ նույն կիսամյակի ընթացքում ուսանողն ունի յուրաքանչյուր այդպիսի դասընթաց վերահանձնելու ընդամենը մեկ հնարավորություն: 4 միավոր և ցածր արդյունք ցուցաբերած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողը պարտավոր է կրկնել դասընթացը:

8. Ուսումնառության 1-ին կիսամյակում մինչև 12 կրեդիտ ծավալով դասընթացներ չհանձնած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողին հնարավորություն է տրվում անհատական ծրագրով կրկնել դասընթացները հաջորդ աշնանային կիսամյակում՝ շարունակելով ուսումը:
9. Ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո սովորողին թույլատրվում է հանձնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերը, եթե դասընթացի գնահատման արդյունարար միավորը 5 ÷7 տիրույթում է, իսկ 4-ից ցածր արդյունարար միավորի դեպքում սովորողը հեռացվում է մագիստրատուրայից:
10. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:
11. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

## 8. Մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը

1. Ուսումնառության առաջին կիսամյակի սկզբում մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողը ծրագրի ղեկավարից ստանում է ուսումնառության իր անհատական ծրագրի ձևաթերթը, որտեղ նախապես լրացված են ուսումնական և հետազոտական կառուցամասերի բաղկացուցիչ դասընթացները և գիտակրթական մոդուլները՝ բացառությամբ կամընտրական դասընթացների:
2. Անհատական ծրագրում տրվում է դասընթացների ընտրացանկն ըստ ուսման տարիների և կիսամյակների՝ դրանց հատկացված կրեդիտների հետ միասին: Մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների ուսումնառության անհատական ծրագրի ձևաթերթը բերված է հավելված 1-ում:
3. Ուսման առաջին շաբաթում ուսանողն իր ուսումնական խորհրդատուի հետ միասին լրացնում է կամընտրական

դասընթացները ուսումնառության իր անհատական ծրագրում, որն այնուհետև հաստատվում է ծրագրի ղեկավարի կողմից և ներկայացվում ամբիոն:

4. Անհատական ծրագրում ներառված տվյալ կիսամյակի կամընտրական դասընթացներին ուսանողների գրանցումն իրականացվում է համապատասխան ամբիոնում:
5. Հետագա կիսամյակների ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրի դասընթացների ընտրացանկում՝ նախապես ստանալով ուսումնական խորհրդատուի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը: Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթերթը բերված է *հավելված 2-ում:*
6. Դասընթացի փոփոխությունը կարող է կատարվել նաև մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման նախաձեռնությամբ, եթե տվյալ դասընթացում բավարար թվով մասնակիցներ չեն ընդգրկվել:
7. Անհատական ծրագրի փոփոխությունը ենթադրում է դասընթացի բացթողում, նոր դասընթացի ընտրություն (ավելացում) ընտրացանկում, որի իրականացման ընթացակարգը հետևյալն է.
   - ուսանողը կարող է բաց թողնել իր ընտրած դասընթացը ուսումնական խորհրդատուի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը,
   - տվյալ կիսամյակի 3-րդից մինչև 4-րդ շաբաթվա վերջը բացթողումը ձևակերպելու համար ուսանողը պետք է ստանա նաև դասընթացը վարող դասախոսի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը,
   - ուսանողն իր ընտրացանկում նոր դասընթաց կարող է ավելացնել ուսումնական խորհրդատուի և դասընթացը վարող դասախոսի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը:
8. Նախորդող կրթական աստիճանի մասնագիտության փոփոխությամբ մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողների համար ուսումնառության 1-ին շաբաթվա ընթացքում կարող են նշանակվել լրացական դասընթացներ: Լրացական դասընթացներ նշանակելու հարցը համապատասխան հարցազրույցից հետո առաջադրվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարի կողմից և համաձայնեցվում մասնագիտացնող ուսումնական ստորաբաժանման հետ:
9. Ուսանողը պատասխանատու է ուսումնառության իր անհատական ծրագրի ճշտության և ամբողջականության ապահովման համար:

10. Կենտրոնը իրեն իրավունք է վերապահում հանել ցանկացած դասընթացի առաջադրումը տվյալ կիսամյակում, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ։

**9. Մագիստրոսի ծրագրի հետազոտական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը**

1. Կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում մագիստրոսական ծրագրի ղեկավարը կազմում և ուսանողներին է տրամադրում տվյալ կիսամյակի հետազոտական աշխատանքների պլանը (ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսվող գիտակրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը)։
2. Ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսված գիտակրթական մոդուլների կատարողականի ստուգման համար կիրառվում է ատեստավորում։ Գիտական ղեկավարի սեմինարի, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի և պրակտիկաների ատեստավորումը կատարում է մագիստրանտի գիտական ղեկավարը և/կամ ամբիոնի վարիչը, որը լրացված ատեստավորման թերթիկն անձամբ հանձնում է ամբիոն։
3. Ուսումնառության 1-ին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած ուսանողին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը 2-րդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսված անավարտ աշխատանքը։ 2-րդ և 3-րդ կիսամյակներում որևէ հետազոտական մոդուլով չատեստավորված ուսանողն ազատվում է Կենտրոնից։

**10. Դասընթացների տեղեկագիրքը**

1. Կենտրոնը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է Կենտրոնի դասընթացների տեղեկագիրք (տպագրված և/կամ կայքէջում տեղադրված է էլեկտրոնային տարբերակով), որը նաև կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց է։
2. Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է Կենտրոնում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) ընդհանուր տեղեկություն Կենտրոնի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ներբուհական հիմնական կանոնները

(հատկապես կրեդիտների կուտակման, պաշտոնական ճանաչման և փոխանցման վերաբերյալ) և այլն,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, կրթությունը շարունակելու հնարավո րությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ավարտական ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ՝ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի գիտելիքներով ու կարողություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), անհրաժեշտ նախապայմանները, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները, դասավանդման լեզուն և այլն,

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար.

- նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի զեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսանողներին հասանելի ուսումնական/լաբորատոր ենթակառուցվածքները և այլն:

## 11. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը

1. Ուսանողի կողմից մագիստրոսի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է մագիստրոսական ատենախոսության կատարումով և պաշտպանությամբ:

2. Մագիստրոսական ատենախոսության գիտական ղեկավարի նշանակումը և թեմայի հաստատումը իրականացվում է 1-ին կիսամյակում: Համապատասխան ընթացակարգը ներառում է.
    - ծրագրի ղեկավարի հետ խորհրդատվությունների անցկացում, որոնց ընթացքում ճշգրտվում են մագիստրանտի հետազոտական հետաքրքրությունները, կազմակերպվում է հանդիպում տվյալ մագիստրոսական ծրագրի ատենախոսությունների ղեկավարների հետ,
    - գիտական ղեկավարի հետ թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների անցկացում,
    - մագիստրոսական ատենախոսության համաձայնեցված թեմաների և գիտական ղեկավարների թեկնածությունների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) հաստատմանը, գիտական ղեկավարի նշանակումը:
3. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համաձայնեցված մագիստրոսական թեզի թեմայի առաջարկի պատրաստում և ներկայացում ամբիոնում (միջամբիոնային հանձնախմբում) քննարկման և հաստատման համար, որն իրականացվում է 2-րդ կիսամյակում: Ատենախոսական առաջարկը պետք է պարունակի թեմայի բնագավառում առկա իրադրության նկարագրությունը, աշխատանքի նպատակը, ածանցյալ խնդիրների առաջադրումն ու սահմանումը, դրանց հավանական լուծումները, հետազոտական մեթոդները և գրականության ցանկը: Ատենախոսական աշխատանքի կատարումը շարունակվում է ուսուցման 3-րդ և 4-րդ կիսամյակներում:
4. Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) մագիստրոսական թեզի ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման քննարկմանը պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ: Մագիստրոսական թեզի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ) մագիստրոսական թեզի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում (միջամբիոնային հանձնախմբում) մագիստրոսական ծրագրի ղեկավարի,

մագիստրանտի գիտական ղեկավարի և մագիստրանտի պարտադիր մասնակցությամբ մեկ շաբաթյա ժամկետում /առաջին շաբաթ/: Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից մագիստրոսական թեզը երաշխավորվում է պաշտպանության,

զ) մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի արտաքին գրախոսության կազմակերպում, որի արդյունքում ոչ ուշ, քան պաշտպանությունից 3 օր առաջ մասնագիտացնող ամբիոնին (միջամբիոնային հանձնախմբին) է ներկայացվում ատենախոսության վերաբերյալ գրախոսականը,

դ) մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

5. Մագիստրոսական թեզի պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված ամփոփիչ ատեստավորման կարգի:
6. Մագիստրոսական թեզի գնահատումը կատարվում է աղյուսակ 4-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:
7. Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար 2021 թվականից սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

*Աղյուսակ 4.*

| Թիվ | Չափանիշ | Առավելագույն միավորը |
|---|---|---|
| *1* | Թեմայի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը | 2 |

| | | |
|---|---|---|
| *2* | Հետազոտության իրականացումը և արդյունքները | 6 |
| *3* | Ձևակերպման որակը(շարադրանքը և ձևավորումը) | 4 |
| *4* | Թեզի հրապարակային պաշտպանությունը | 8 |
| | **Ընդամենը** | **20** |

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից մագիստրոսական թեզի գնահատումները կատարվում են սահմանված նմուշի գնահատման ձևաթերթում (տե՛ս *հավելված 4*):

## 12. Կրեդիտների փոխանցումը

1. Այլ բուհերից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն մագիստրոսի կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:
2. Այլ կրթական ծրագրից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն կրթական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:
3. Այլ բուհում ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի և ընդունող բուհի միջև:
4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը նշանակում է ECTS-ի բուհական համակարգող, որի գործունեության հիմնական ոլորտները և պարտականությունների շրջանակները

կանոնակարգվում են առանձին կարգով /անհրաժեշտության դեպքում/:

**13. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը**

5. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ամբիոնները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:
6. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է Կենտրոնը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ամբիոնների դասախոսական ներուժի համադրումից:
7. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:
8. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար (ամիսը 2 անգամ ) կազմակերպում խմբային և/կամ անհատական խորհրդատվու-թյուններ, ողջ աշխատանքային օրվա ընթացքում օգնում դաս-ընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

**14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**

1. Ուսանողը պարտավոր է՝
   - ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
   - կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
   - կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:
2. Ուսանողն իրավունք ունի՝
   - – ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Կենտրոնի կողմից առաջադրվող

կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- – միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- – փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- շարունակելու ուսումնառությունը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

### 15. Եզրափակիչ դրույթներ

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2019 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար:

# II ԲԱԺԻՆ

## ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## Մաս I.

### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Արևելագիտության ամբիոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում՝ «Թյուրքագիտություն» ծրագրով.

## 1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

| Կրթամաս | Կրեդիտներ | Դասընթաց-մոդուլների քանակը |
|---|---|---|
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | | |
| Լրացական դասընթացներ | 0 | 5 |
| Ընդհանուր կրթամաս | 7 | 2 |
| Մասնագիտական պարտադիր կրթամաս | 47 | 13 |
| Կամընտրական դասընթացներ | 15 | 6 |
| ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | | |
| Գիտական սեմինար | 12 | 4 |
| Գիտահետազոտական աշխատանք | 18 | 3 |
| Գիտահետազոտական պրակտիկա | 3 | 1 |
| Գիտամանկավարժ. պրակտիկա | 3 | 1 |
| Մագիստրոսական թեզի պաշտպանություն | 15 | 1 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 120 | 36 |

| Կիսամյակ | I | II | III | IV | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Ուսումնական կառուցամաս, կրեդիտ | 26 | 25 | 18 | 0 | 69 |
| Հետազոտական կառուցամաս, կրեդիտ | 3 | 6 | 9 | 33 | 51 |
| **Ընդամենը, կրեդիտ** | **29** | **31** | **27** | **33** | **120** |

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցմանը և պրակտիկաներին, իսկ 4-ը՝ քննաշրջանին: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը:

Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

## 2. Ծրագրի բովանդակությունը

### 2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է հետևյալ բաղադրիչնե-րից՝ ***լրացական դասընթացներ***, ***ընդհանուր կրթամաս, մասնագիտական պար-տադիր կրթամաս և կամընտրական դասընթացներ***: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակա-յին էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողու-թյունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

### Լրացական դասընթացներ

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աս-տիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտու-թյան փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշ-խատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից ել-նելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ու-սումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օ-տար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախա-տեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթաց-ները կրեդիտատար չեն:

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրե-դիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ)[9] | Կիսամ-յակ | Գնահատ-ման ձևը |
|---|---|---|---|---|---|
| 18/M01 | Մասնագիտական օտար լեզու /անգլերեն-1 | *0* | *24/8/0/* | *I,* | *Ստուգարք* |
| 18/M01 | Մասնագիտական օտար լեզու /անգլերեն-2 | *0* | *24/8/0/* | *II* | *Ստուգարք* |
| 18/M02 | Մասնագիտական օտար լեզու /գերմաներեն-1 | *0* | *24/8/0/* | *I,* | *Ստուգարք* |
| 18/M02 | Մասնագիտական օտար լեզու /գերմաներեն-2 | *0* | *24/8/0/* | *II* | *Ստուգարք* |
| 18/M03 | Մասնագիտական օտար լեզու /ֆրանսերեն-1 | *0* | *24/8/0/* | *I,* | *Ստուգարք* |
| 18/M03 | Մասնագիտական օտար լեզու /ֆրանսերեն-2 | *0* | *24/8/0/* | *II* | *Ստուգարք* |
| 01/M30 | Մասնագիտական օտար լեզու /թուրքերեն-1 | *0* | *24/8/0/* | *I,* | *Ստուգարք* |
| 01/M30 | Մասնագիտական օտար լեզու /թուրքերեն-2 | *0* | *24/8/0/* | *II* | *Ստուգարք* |
| 01/M30 | Մասնագիտական օտար լեզու /թուրքերեն-3 | *0* | *24/8/0/* | *III* | *Ստուգարք* |

[9] Այսուհետ՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք, *լ* – լաբորատոր աշխատանք:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 01/M46 | Միջմշակութային հաղորդակցության հիմնախնդիրներ | *0* | *24/8/0/* | *III* | *Ստուգարք* |

### Ընդհանուր դասընթացների կրթամաս

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 7 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ *"Ինֆորմատիկա և համակարգչային տեխնոլոգիաներ" և "Տարածաշրջանային աշխարհաքաղաքականության հիմնահարցեր":* Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր կրթամասին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրե- | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամ-յակ | Գնահատ-ման ձևը |
|---|---|---|---|---|---|
| 05/M09 | Ինֆորմատիկա և համակարգչային տեխնոլոգիաներ | *3* | *24/8/0* | *I* | *Քննություն* |
| 01/M20 | Տարածաշրջանային աշխարհաքաղաքականության հիմնահարցեր | *4* | *32/0/0* | *I* | *Քննություն* |

### Մասնագիտական պարտադիր կրթամաս

| | Կահիրեյում սիրիացիների կողմից հիմնադրված «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցությունը» իր ծրագրում առաջ էր քաշում բազմակրոն և բազմազգ Օսմանյան կայսրության ապակենտրոնացման անհրաժեշտությունը և դրա առավելությունները: Կուսակցությունը իր առջև նպատակ էր դրել պահպանել կայրությունն արտաքին ճնշումներից և ներքին ընվզումներից, համախմբել կայրության բոլոր ժողովուրդներին կենտրոնական իշխանության «Օսմանյան թագի» շուրջ պահովելով նրա ամբողջականությունը, միաժամանակ, զերծ պահելով արաբական վիլայեթները գաղութի վերածվելու | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հեռանկարից:Այս ժամանակաշրջանում արաբական վիլայեթներում հիմնվեցին Բարեփոխումների կոմիտեներ, որոնց հիմնական նպատակը դարձյալ ապակենտրոնացման ձեռքբերումն էր: | | | |
| Թեմա 10 | **Առաջին արաբական կոնգրեսը և նրա հետևանքները.** | 2 | | Կյուրացնի Առաջին արաբական կոնգրեսի և նրա հետևանքների պատմությունը |
| | 1913 թ. հունիսի 18-23-ը Փարիզում հրավիրվեց Առաջին արաբական կոնգրեսը, որի նպատակն էր ոչ միայն համախմբել և նպատակաուղղել Օսմանյան կայսրության և նրա սահմաններից դուրս արաբական քաղաքական ուժերի գործունեությունը, այլև ցույց տալ օսմանյան ղեկավարությանը, որ արաբական վիլայեթների ապակենտրոնացման պահանջը ստեղծված պայմաններում այլընտրանք չունի:Արաբական առաջին կոնգրեսը կարևոր դեր խաղաց արաբական ազգային շարժման ձևավորման և հետագա զարգացման վրա: | | | |
| Թեմա 11 | **«Ալ-Ահդ» կազմակերպությունը: Իրադրությունը արաբական վիլայեթներում Առաջին աշխարհամարտի նախօրեին** | 2 | | Կյուրացնի «Ալ-Ահդ» կազմակերպության և Առաջին աշխարհամարտի նախօրեին արաբական վիլայեթներում տեղի ունեցող զարգացումների պատմությունը |
| | 1913թ. օսմանյան բանակի մայոր Ազիզի Ալի ալ- Միսրին իր համախոհների հետ ստեղծեց «Ալ-Ահդ» գաղտնի արմատական ընկերությունը, որի մեջ գերիշխում էր զինվորական տարրը: «Ալ- | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ահդի» հիմնական աջնային նպատակն էր արաբական երկրերում ներքին ինքնավարության հաստատումը Օսմանյան կայսրության սահմաններում՝ Ավստրո-Հունգարիայի դուալիստական պետության օրինակով, որի իրականացման համար նրանք չէին բացառում ուժային մեթոդների կիրառումը: Առաջին համաշխարհայիյն պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրություն ստեղծված բարդ իրադրությունը, երիտթուրքերի վարած ազգային քաղաքականությունը, արաբ ազգային ղեկավարներին համար վերջնականապես պարզ դարձրին, իրենց ազգային հարցերի լուծման գործում օրինական միջոցների անհեռանկարությունը և դրդեցին նրանց պայքարի այլ առավել արդյունավետ ձևերի: Սակայն արաբների ազգայնականների մեծամասնությունը առաջ չէր քաշում արաբական վիլայեթների անկախության խնդիրը դեմ էր կայրոթյան մասնատմանը, նրա պահպանումը համարելով եվրոպական տերությունների կողմիցզավթարարական քաղաքականությանը դիմագրաելու միակ միջոց: | | | |
| Թեմա 12 | Առաջին համաշխարհային պատերազմ և արաբների դիրքորոշումը | | | Կյուրացնի Առաջին համաշխարհային պատերազմում արաբների դիրքորոշման պատմությունը |
| | Պատերազմի առաջին տարիների ընթացքում արաբ ազգայնական գործիչներ և ազգայնական կազմակերպությունների զգալի | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մասը շարունակում էին պահպանել հավատարմությունը Օսմանյան կայսրությանը, հավատալով, որ հաղթանակի դեպքում կկատարվեն իրենց տրված խոստումները՝ ի վերջո ստանալով ինքնավարության լայն իրավունքներ: Սակայն իթթիհադականների վարած այս անգամ արդեն բացահայտ ազգայնամոլական, թուրքացման քաղաքականությունը, վերջնականապես հիսթափեցրեց արաբներին, դրդելով նրանց միանալ Անտանտի պետություններին: | | | |
| Թեմա 13 | Արաբական Մեծ ապստամություն | 2 | 2 | Կյուրացնի Արաբական Մեծ ապստամության պատմության հիմնահարցերը |
| | 1916թ. Շերիֆ Հուեյնը գլխավորությամբ սկսվեց Արաբական Մեծ ապստամբությունը: Նախկան ապստամբություն բարձրացնելը Շերիֆ Հուսեյնը բանակցություններ էր վարում ազլիացիների հետ արաբական երկրների հետագա ճակատագրի վերաբերյալ, պահանջելով հաղթանակի դեպքում արաբական անկախ պետության ստեղծում: | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ 32 ժամ, 3 կրեդիտ | | 26 | 6 | |

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,

- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 59. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 60. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 61. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

**01/M24. Թուրքիայի հանրապետության պատմության հիմնահարցեր (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

**Ծրագրի նպատակն** է՝ ուսանողներին ծանոթացնել ժամանակագրական կարգով ներկայացված Թուրքիայի Հանրապետության պատմության հիմնահարցերին, տալ նրանց հիմնավոր և կանոնակարգված գիտելիքներ ուսումնասիրվող երկրի պատմության առանձնահատկությունների մասին, ինչպես նաև սովորեցնել կողմնորոշվել առարկայի վերաբերյալ առկա գիտական գրականության շրջանակում: Հատուկ ուշադրություն է դարձվում Թուրքիայի Հանրապետության կայացման առանձնահատկություններին, քեմալական շարժմանը և քեմալիզմին՝ հայ արևելագետների կողմից տրված գնահատականներին, խորհրդա-թուրքական և թուրք-հայկական հարաբերություններին, աշխարհիկության և իսլամականության հակադիմությանը, ռազմական հեղաշրջումներին, երկրի արտաքին կողմնորոշումներին, բազմակուսակցական համակարգի ձևավորմանը, ազգային փոքրամասնությունների վիճակին, Թուրքիայի արդիականացմանը և բարեփոխումների փորձերին տարբեր փուլերում և այլ հարցերին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

**Կիմանա**

- բազային տարեթվեր, անուններ, տերմիններ առարկայի թեմատիկ շրջանակում;
- հիմնական աղբյուրներն ու գրականությունը;
- Թուրքիայի Հանրապետության քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման բնորոշ հատկությունները;

**Կկարողանա**

1.*իրականացնել*՝

- Թուրքիայի Հանրապետության պատմական իրադարձությունների և զարգացումների վերաբերյալ ինքնուրույն ուսումնասիրություն՝ դասընթացի թեմատիկ ոլորտում ներկայացնելով գործընթացներն ու երևույթները համակարգված /սիստեմավորված/ձևով;

2.*բնութագրել*՝

- Թուրքիայի Հանրապետության պատմական զարգացման մեջ ընդհանուրն ու առանձնահատուկը՝ Արևելքի երկրների և համաշխարհային պատմության ենթատեքստում;

3.*մեկնաբանել*՝

- Թուրքիայի Հանրապետության պատմության սուբյեկտների գործունեությունը;

- պատմական իրադարձությունների մասնակիցների դիրքորոշումներն ու դրդապատճառները;

4.*ուսումնասիրել և հետազոտել*՝

- Թուրքիայի Հանրապետության պետական-քաղաքական կառուցվածքը, սոցիալ-տնտեսական համակարգը, կառավարման ձևերը և հիմնական ինստիտուտները;

- հիմնական քաղաքական կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները;

- արտաքին և ներքին քաղաքականությունը;

-սոցիալական խավերն ու խմբերը տարբեր ժամանակաշրջաններում;

- ազգային փոքրամասնությունների տեղը, դերը, նրանց հանդեպ վարվող քաղաքականության առանձնահատկությունները;

5. *բացահայտել*՝

- Թուրքիայի Հանրապետությունում գաղափարախոսական, էթնո-կրոնական, էթիկական գործոնների և ավանդական ինստիտուտների ազդեցությունները պատմական գործընթացների վրա;

- զինվորականություն – քաղաքացիական հասարակություն, աշխարհիկություն – իսլամականություն և այլն. գործոնների ազդեցությունները պատմական գործընթացների վրա;

- պատմական երևույթների փոխկապակցվածության և տարբեր գործոններով պայմանավորվածության աստիճանը;

7. *կիրառել*՝

- տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ ստացած բազային գիտելիքները մասնագիտական գործունեության մեջ;

- մասնագիտական բառապաշարը, գիտական ինֆորմացիայի հայթայթման և մշակման մեթոդները;

- պատմական գիտելիքների նորացման և ակտուալացման հմտությունները;

**Կտիրապետեն**

- պատմական ուսումնասիրություններ կատարելու տեսական և մեթոդաբանական բազային հիմունքներին;

- պատմական աղբյուրներից, գիտական գրականությունից և տարբեր տեսակի քարտեզներից օգտվելու հմտություններին;

- տվյալ ժամանակաշրանի վերաբերյալ պատմական բազային ինֆորմացիան քննական և համեմատական ձևով ինքնուրույն վերլուծելու, մեկնաբանելու և շարադրելու կարողություններին.

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապունքների տիպը, ժամերի թիվը | | | Վերջնարդյունք |
|---|---|---|---|---|---|
| | | Դասախոսություն | Սեմինար, գործնական | Ինքնուրույն | |
| **Թեմա 1** | **Քեմալական շարժման սկզբնավորումը Թուրքիայում** | 2 | | | Կյուրացնի քեմալական շարժման սկզբնավորման պատմության հիմնահարցերը |
| | Օսմանյան կայսրությունը Առաջին աշխարհամարտի ավարտին:Սևրի պայմանագիր:Ազգայնական (քեմալական) շարժման սկիզբը. դրա գնահատականները:Մուստաֆա Քեմալը և նրա դերը ազգայնական շարժման կազմակերպման գործում: Քեմալական շարժման փուլերը: Էրզրումի և Սվասի համաժողովները: «Ազգային ուխտ»: ԹԱՄԺ-ի ձևավորումը: | | | | |
| **Թեմա 2** | **Թուրքիան՝ Սևրից մինչև Լոզան** | 2 | | | Կյուրացնի 1920-1922 թթ. Թուրքիայի պատմության հիմնահարցերը: |
| | 1920 թ. թուրքական արշավանքը ՀՀ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | դեմ: Ալեքսանդրապոլի պայմանագիր:1919-22 թթ. հույն-թուրքական պատերազմը: Մուդանիայի զինադադար: Խորհրդա-թուրքական հարաբերությունների հաստատումը: Մոսկվայի պայմանագիր (1921թ., մարտ 16): Կարսի պայմանագիր (1921 թ., հոկտեմբեր 13):Մեծ տերությունների քաղաքականությունը և Թուրքիան: Սևրից մինչև Լոզան: Հայկական հարցը միջազգային դիվանագիտական փաստաթղթերում (Հայաստանի մանդատ. Սևրի հաշտության պայմանագիր, Վիլսոնի իրավարարական պայմանակարգ, Լոզանի կոնֆերանս): | | | | |
| **Թեմա 3** | **Թուրքիայի Հանրապետության կայացումը** | 2 | | | Կյուրացնի Թուրքիայի հանրապետության կայացման պատմության հիմնահարցերը: |
| | Թուրքիայի Հանրապետության հռչակումը և խալիֆայության վերացումը: Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ: Էտատիզմ: Առաջին Սահմանադրություն: Քեմալական բարեփոխումները կրթության, մշակույթի, կենցաղի բնագավառներում: | | | | |
| **Թեմա 4** | **Կուսակցապետության ձևավորումը Թուրքիայում** | 2 | 2 | | Կյուրացնի կուսակցապետության ձևավորման պատմության հիմնահարցերը Թուրքիայում: |
| | Հակազդեցություն բարեփոխումներին: Շեյխ Սաիդի ապստամբությունը: Մ. Քեմալը և քաղաքական վերնախավը: Պայքար մենիշխանության համար: ՀԺԿ-ի մենատիրության հաստատումը: | | | | |
| **Թեմա 5** | **Քեմալիզմ** | 2 | | | Կյուրացնի՝ Քեմալիզմի՝ որպես պետական գաղափարախոս |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ության պատմության հիմնահարցերը: |
| | Քեմալիզմը որպես պետական գաղափարախոսություն: Քեմալիզմի «վեց նետերը»: Քեմալական արդիականացման գնահատական: Ազգային քաղաքականություն: Մուսթաֆա Քեմալը՝ նոր Թուրքիայի առաջնորդ: | | | | |
| **Թեմա 6** | **Թուրքիան Երկրորդ աշխարհամարտի նախօրեին** | 2 | 2 | | Կյուրացնի Թուրքիայի Հանրապետության՝ Երկրորդ Աշխարհամարտի նախօրեին պատմության հիմնահարցերը: |
| | Թուրքիան Երկրորդ Աշխարհամարտի նախօրեին: Հակասություններ ՀԺԿ-ի ներսում. Ի.Ինյոնյուի բեմելը: Արտաքին քաղաքականություն: Մոնթրյոյի պայմանագիր: | | | | |
| **Թեմա 7** | **Թուրքիան Երկրորդ աշխարհամարտի տարիներին** | 2 | | | Կյուրացնի Թուրքիայի Հանրապետության պատմության հիմնահարցերը 1939-1945 թթ. |
| | Թուրքիան Երկրորդ Աշխարհամարտի տարիներին: Արտաքին քաղաքականություն և ներքին տնտեսական զարգացման առանձնահատկությունները: Հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ: Թուրքիայի մերձեցումը Արևմուտքի հետ: | | | | |
| **Թեմա 8** | **Թուրքիան 1945-50-ական թթ.** | 2 | 2 | | Կյուրացնի Թուրքիայի Հանրապետության 1945-50-ական թթ. պատմության հիմնահարցերը: |
| | Անցում բազմակուսակցական համակարգին:ԴԿ հիմնադրումը: 1950թ. խորհրդարանական ընտրությունները և ԴԿ-ի հաղթանակը: ԴԿ տասնամյա | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կառավարումը: Թուրքիայի մասնակցությունը ռազմական դաշինքներին 1950-ականներին: Կիպրոսի հարցի ծագումը: | | | | |
| **Թեմա 9** | **«Երկրորդ հանրապետություն»** | 2 | | | Կյուրացնի Թուրքիայի Հանրապետության 1960-ական թթ. պատմության հիմնահարցերը: |
| | 1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումը: Թուրքիան հեղաշրջումից հետո: 1961 թ. նոր Սահմանադրությունը: 1960-ական թթ.՝ քաղաքական անկայունության շրջան: Քաղաքական կուսակցությունները 1960-ական թթ. երկրորդ կեսին: ԱԿ - Ս. Դեմիրել: Սոցիալ-տնտեսական ճգնաժամը Թուրքիայում 1960-ականների վերջում: Ձախակողմյան շարժման ակտիվացումը 1960-ական թթ.: | | | | |
| **Թեմա 10** | **Թուրքիան 1970-80 թթ.** | 2 | | | Կյուրացնի Թուրքիայի Հանրապետության 1970-ական թթ. պատմության հիմնահարցերը: |
| | 1971 թ. ռազմական հեղաշրջումը: Թուրքիան 1971-80 թթ.-ին: ՀԺԿ-ի նորացումը (Բ. Էջևիթ): ԱՇԿ և «Գորշ գայլերը» (Ա. Թյուրքեշ): Ներքաղաքական պայքարի բևեռացումը 1970-ական թվականների վերջում: Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները 1961-80-ական թթ. (Կարիբյան ճգնաժամ, Կիպրոս, արաբական երկրներ, «սառը պատերազմի» սրում 1979-80 թթ.-ին): | | | | |
| **Թեմա 11** | **«Երրորդ հանրապետություն»** | 2 | 2 | | Կյուրացնի Թուրքիայի Հանրապետության 1980-ական թթ. պատմության հիմնահարցերը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը: Քաղաքական դաշտի «մաքրում»: Նոր Սահմանադրություն: Անցում քաղաքացիական կառավարման: 1983 թ. ընտրություններ: Թ. Օզալի «դարաշրջան»՝ «թուրքական հրաշք»: Էտատիզմի ավարտ, տնտեսության ազատականացում: Արտաքին քաղաքականության առանձնահատկություններ:Կրոնի վերելքը Թ. Օզալի կառավարման տարիներին: «Թյուրք-իսլամական համադրություն» նախագիծը: | | | | |
| **Թեմա 12** | **Քաղաքական իսլամի հաղթանակը Թուրքիայում** | 2 | | | Կյուրացնի Թուրքիայի Հանրապետություւնում քաղաքական իսլամի հաղթանակի պատմությունը: |
| | 1995 թ. խորհրդարանական ընտրությունները և Բարօրություն կուսակցության հաղթանակը: Ն. Էրբաքան:Բանակի չորրորդ միջամտությունը (1997 թ.): Ներքաղաքական իրավիճակը Թուրքիայում 1997 թ.-ից հետո (Թ. Չիլեր, Ն. Էրբաքան, Մ. Յըլմազ, Բ. Էջևիթ-ի կառավարությունները): Քաղաքական իսլամի ակտիվացումը Թուրքիայում XX-XI դդ. սահմանագծում: «Ֆազիլեթ» կուսակցության պառակտումը: «Նորարարների» առանձնացումը: ԱԶԿ-ի ստեղծումը: Ռ. Էրդողան:ԱԶԿ-ի հաղթանակը 2002 թ. ընտրություններին: Չափավոր իսլամականների կառավարման շրջանը: Ներքին և արտաքին քաղաքականության հիմնահարցեր: | | | | |
| **Ընդամենը**՝ 32 **ժամ,** որից դասախոսություն 24 ժամ, սեմինար 4 ժամ, և գործնական 4 ժամ | | 24 | 8 | | |

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 62. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 63. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 64. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

01/M25. Արաբական երկրների պայքարը անկախության նվաճման համար (1918-1946 թթ.) (3 կրեդիտ)

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ներկայացնել Մերձավոր և Միջին Արևելքի, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներում 20-րդ դարի առաջին կեսին ստեղծված աշխարհաքաղաքական դրությունը,

ամբողջական պատկեր կազմել այն կարևորագույն իրադարձությունների մասին, որոնք տեղի ունեցան այս տարածաշրջանում և նպաստեցին արաբական երկրների անկախության ձեռքբերման համար, ինչպես նաև ծանոթանալ այս ժամանակաշրջանում արևմտյան պետությունների վարած մերձավորարևելյան քաղաքականության հետ, ինչն իր անմիջական ազդեցությունն էր ունենում արաբական աշխարհում տեղի ունեցող գործընթացների վրա,

ուսանողների մոտ ապահովել գիտելիքների այն անհրաժեշտ պաշարը, որոնք հնարավորություն կտան տեսնելու 20-րդ դարում աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները և արաբական երկրների միջև գոյություն ունեցող կապը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. **կիմանա** ուսումնասիրվող ժամանակաշրջանում արաբական երկրների անկախության և ինքնավարության ձեռքբերման պատմական զարգացման ընթացքը և ուղղվածությունը,

2. **կկարողանա** հասկանալ այդ շրջանում արաբական երկրների պատմության հիմնախնդիրները, վերլուծել և ճիշտ գնահատել ուսումնասիրվող երկրներում տեղի ունեցող իրադարձությունները և նրանց առանձնահատկությունները,

3. **կտիրապետի** ուսումնասիրվող Արաբական երկրների ներքին սոցիալ-քաղաքական իրավիճակին, այն քաղաքականությանը, որը վարում էին արևմտյան պետությունները, հատկապես Անգլիան և Ֆրանսիան, իրենց հովանավորության, հսկողության տակ գնվող երկրներում, ինչպես նաև այն դրդապատճառներին, որոնք նախորդում էին նշված ժամանակաշրջանում իրականացրած բազմաթիվ հեղափոխություններին, հեղաշրջումներին, ժողովրդական ու հակազաղութային ապստամբություններին: Բացի այդ ուսանողները կտիրապետեն տվյալ պատմական շրջանի միջարաբական հարաբերություններին, իրենց առանձնահատկություններով և յուրահատկություններով և այստեղ առկա խնդիրներին: Դրա հետ մեկտեղ կկարողանան ճիշտ վերլուծել ու ընկալել հետագա տարիների պատմական զարգացման ուղին՝ անմիջական կապ տեսնելով անցյալի և ապագայի պատմական գործընթացների միջև:

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապմունքի տիպը ժամերի թիվը | | |
|---|---|---|---|---|
| | | դաս խո-սություն | սեմինար, գործնական | Վերջնարդյունք |
| | ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | | | |
| Թեմա 1 | Սիրիան 1918-1920թթ. | 2 | | **Կյուրացնի Սիրիայի 1918-1920 թթ. Պատմության հիմնահարցերը** |
| | Սիրիայի ազատագրումը օսմանյան տիրապետությունից, արաբական զորքերի հաղթանակը: Սիրիայի ներքին իրավիճակը, ազգային կառավարության ստեղծումը: Անգլո-արաբական բանակցությունները Սիրիայի | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ապազայի վերաբերյալ (Ֆեյսալ-Ալենբի): Փարիզի խաղաղության կոնֆերանսում արաբական հարցի քննարկումը: Սիրիայի թագավորության ստեղծումը և անկումը | | | |
| Թեմա 2 | Սիրիան մանդատի հաստատումից մինչև անկախություն: | 2 | | Կյուրացնի Սիրիայի պատմության հիմնահարցերը մանդատի տարիներին: |
| | Ֆրանսիական զորքերի մուտքը Սիրիա, ֆրանսիական մանդատի հաստատումը: Ֆրանսիայի վարած քաղաքականությունը Սիրիայում: Սիրիայի բաժանումը մանր պետությունների: Հակաֆրանսիական ժողովրդական ապստամբությունները, 1925-1927 թթ. համասիրիական ապստամբությունը: Ֆրանսա-սիրիական հարաբերությունները 1934-1939 թթ.: Մանդատի վերացումը և անկախության ձեռքբերումը: Սիրիան 1948 և 1967 թթ. արաբա-իսրայելական պատերազմների ընթացքում: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Թեմա 3 | **Անդրիորդանան թագավորության ստեղծումը.** | 2 | | Կյուրացնի Անդրիորդանանյան պետության ստեղծման պատմությունը: |
| | Անդրիորդանանի հիմնումը Անգլիական մանդատի ներքո: Հաշիմյան հարստության հաստատումը: Անգլիայի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը Անդրիորդանանում: Անդրիորդանանի հարաբերությունները Անգլիայի հետ. թագավորության կարգավիճակը: Բրիտանական մանդատի վերացումը և Հորդանան թագավորության հռչակումը, անկախության ձեռքբերումը: | | | |
| Թեմա 4 | **Հորդանանը անկախության առաջին տարիներին** | 2 | 2 | Կյուրացնի Հորդանանի պատմության հիմնահարցերը անկախության առաջին տարիներին: |
| | Հորդանանի հարաբերությունները արաբական երկրների հետ: Արաբական ֆեդերացիայի ստեղծումը: Արաբա-իսրայելական առաջին պատերազմը. Պաղեստինցի փախստականների խնդիրը: 1967 թ. արաբա- | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | իսրայելական պատերազմը և նրա հետևանքները Հորդանանի համար: | | | |
| Թեմա 5 | Պաղեստինը 1948-1967 թթ. | 2 | | Կյուրացնի Պաղեստինի 1948-1967 թթ. Պատմության հիմնահարցերը |
| | Պաղեստինը անգլիական մանդատի ներքո: Հրեական գաղթօջախի ստեղծումը Պաղեստինում և պաղեստինցի արաբների դիրքորոշումը: Պաղեստինի բաժանումը և Իսրայել պետության ստեղծումը: Արաբա-իսրայելական հակամարտությաn սկիզբը: 1967թ. պատերազմի հետևանքները Պաղեստինի համար: | | | |
| Թեմա 6 | Իրաքը 1918-1932 թթ. | 2 | | Կյուրացնի Իրաքի 1918-1932 թթ. պատմության հիմնահարցերը: |
| | Օսմանյան տիրապետության վերացումը և անգլիական մանդատի հաստատումը Իրաքում: Ֆեյսալ իբն Հուսեյն Իրաքի թագավոր, Հաշիմյան հարստության հաստատումը: Իրաքի պայքարը մանդատային | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համակարգի դեմ: 1930թ. անգլո-իրաքյան պայմանագիրը, մանդատի վերացումը և Իրաքի ձևական անկախության շնորհումը: | | | |
| Թեմա 7 | Իրաքը 1932-1959 թթ. | 2 | | Կյուրացնի 1932-1959 թթ. Իրաքի պատմության հիմնահարցերը: |
| | Իրաքը անկախության առաջին տարիներին: Իրաքը ապստամբություննների և հեղաշրջումների տարիներին (1935-1936 թթ. ապստամբություն, 1936 թ. պետական հեղաշրջում, 1941 թ. քրդական ապստամբություն, 1948 և 1952 թվականների ապստամբությունները): Բաղդադի պակտ: 1956 թ. նոյեմբերյան ապստամբությունը: 1958 թ. հուլիսյան հեղափոխութույնը. Ազատ սպաներ կազմակերպություն | | | |
| Թեմա 8 | Քուվեյթը 1918-1961 թթ. | 2 | | Կյուրացնի Քուվեյթի պետության 1918-1961 թթ. պատմության հիմնահարցերը |
| | Քուվեյթը անգլիական պրոտեկտորատի ներքո, 1899թ. անգլո-քուվեյթյան պայմանագիրը: Քաղաքական, | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | սոցիալ-տնտեսական իրավիճակը Քուվեյթում 1920-1940 ական թթ., Քուվեյթը անկախ պետություն 1961թ.: Քուվեյթի հարաբերությունները Իրաքի հետ. տարածքային տարաձայնություններ: | | | |
| Թեմա 9 | Եգիպտոսը 1952-1956թթ. | 2 | 2 | Կյուրացնի 1952-1956 թթ. Պատմության հիմնահարցերը: |
| | Եգիպտոսը 1945-1950 թթ. ներքին քաղաքական իրավիճակը. 1952 թ. հուլիսյան հեղափոխությունը: Ազատ սպաներ կազմակերպությունը: 1954 թ. անգլո-եգիպտական համաձայնագիրը: Անգլիական զորքերի դուրս բերումը Եգիպտոսից: 1956թ. Սուեզի ջրանցքի ընկերության ազգայանցումը և անլո-ֆրանս-իսրայելական ագրեսիան: | | | |
| Թեմա 10 | Եգիպտոսը 1956-1967թթ. | 2 | | Կյուրացնի 1956-1967 թթ. Եգիպտոսի պատմության հիմնահարցերը: |
| | Եգիպտոսը բարեփոխումների շրջանում (հողային բարեփոխումներ, օտարերկրյա ընկերությունների ազգայանացում): | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Եգիպտոսի վարած արտաքին քաղաքականությունը: Միացյալ Արաբական Հանրապետության ստեղծումը և փլուզումը 1958-1961թթ., 1967թ. պատերազմը և նրա հետևանքները: | | | |
| Թեմա 11 | Լիբիան 1939-1969թթ. | 2 | | Կյուրացնի 1939-1969 թթ. Լիբիայի պատմության հիմնահարցերը: |
| | Լիբիայի նվաճումը Իտալիայի կողմից: Լիբիան Իտալիայի կառավարման ներքո 1918-1939 թթ.: Անկախ Լիբիայի Միացյալ Թագավորության հիմնումը, թագավորության պետական համակարգը և նրա հարաբերությունները արաբական երկրների հետ: «Ազատ սպաների» 1969թ. հեղաշրջումը: Լիբիական արաբական հանրապետության հռչակումը: | | | |
| Թեմա 12 | Ալժիրը 1939-1962թթ. | | | Կյուրացնի 1939-1962 թթ. Ալժիրի պատմության հիմնահարցերը: |
| | Ֆրանսիայի կողմից Ալժիրի գաղութացումը: Պայքար գաղութային իշխանություններ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ի դեմ: Ֆրանսիայի վարած գաղութային քաղաքականությունը: Ալժիրը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Ազատագրական պատերազմն Ալժիրում 1954-1956թթ., նրա ազդեցությունը Ֆրանս-ալժիրյան հետագա հարաբերությունների վրա: Ֆրանս-ալժիրյան բանակցությունները. Ալժիրի անկախությունը: | | | |
| Թեմա 13 | Սաուդյան Արաբիայի թագավորության կազմավորումը | 2 | 2 | Կյուրացնի Սաուդյան Արաբիա պետության կազմավորման պատմության հիմնահարցերը: |
| | Աբդ ալ-Ազիզ ալ-Սաուդ. Հիջազի զավթողական պատերազմները, նրա հզորացումը, Սաուդյան Արաբիայի հիմնադրումը: Սաուդյան Արաբիայի հարաբերությունները հարևան արաբական երկրների հետ, Աբդ ալ-Ազիզ ալ Սաուդի վարած արտաքին քաղաքականությունը 20-րդ դարի առաջին կեսին: | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ 32 ժամ, 3 կրեդիտ | | 26 | 6 | |

# ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 65. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 66. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 67. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

01/M27. Թուրքիայի պատմության հանգուցային հիմնախնդիրներ (3 կրեդիտ)

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի հիմնական նպատակն է հնարավորություն ընձեռել ուսանողներին ավելի լավ հասկանալ և վերլուծել ժամանակակից Թուրքիայում քաղաքական կյանքի, ինստիտուտների և գործընթացների բազմազանություններն ու փոփոխականությունները:

Դասընթացի նշանակալի խնդիրներից է ուսանողներին տրամադրել տեսական գիտելիքների նախահիմքեր և վերլուծական գործիքներ ՝գնահատելու Թուրքիայի քաղաքական զարգացումը՝ ուսումնասիրելով դրա մշակութային համատեքստը, ինստիտուցիոնալ կառուցվածքը, հասարակական-քաղաքական գործընթացները, ինչպես նաև այն նախադրյալներն ու զարգացումները, որոնք ազդում են դրանց ձևավորման վրա:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**Կիմանան**

- կստանան տեղեկություններ առարկայի բնագավառում բազային ամսաթվերի, անվանումների և տերմինների վերաբերյալ հիմնական աղբյուրների և գրականության մասին;
- կիմանան թուրքական պետության քաղաքական կառուցվածքի, սոցիալ-տնտեսական համակարգի, կառավարման ձևերի և պետության հիմնական ինստիտուտների մանրամասնությունները;
- կծանոթանան զիտական գրականությանը և Թուրքիայի պատմության և քաղաքականության վերաբերյալ բանավեճերին.

**Կկարողանան**

-նկարագրել Թուրքիայի Հանրապետությունում պատմական իրադարձությունների մասնակիցների գործունեությունը, դրա դրդապատճառները և վերաբերմունքը; հիմնական քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները; արտաքին և ներքին քաղաքականությունը; սոցիալական և ազգային փոքրամասնությունների խմբերը, ինչպես նաև դրանց նկատմամբ պետական քաղաքականության առանձնահատկությունները;
- խորհել, թե ինչպես են զլոբալ, տարածաշրջանային և ներքին հարաբերությունները ազդում Թուրքիայի իրավիճակի վրա;
- վերլուծել աղբյուրները, որոնք առնչվում են Թուրքիայի պատմության և քաղաքականության խնդիրներին;
- ցույցաղրել քննադատական մտածողություն, հետազոտության, զրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններ:

**Կտիրապետեն** հմտություններին հետևյալ ոլորտներում.

-համաշխարհային, տարածաշրջանային և տեղական գործընթացների պատմական կոնտեքստի պատկերացում;
-ինքնուրույն ուսումնասիրություն անցկացնելու ունակություն;
-առաջնային աղբյուրների և այլ նյութերի քննական ընթերցանության ունակություն;
-Թուրքիայի անցյալի և ներկայի մասին հստակ և փաստարկված բանավիճելու և զրավոր շարադրանքով հանդես գալու ունակություն:

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապունքների տիպը, ժամերի թիվը | | | Վերջնարդյունք |
|---|---|---|---|---|---|
| | | Դասախոսություն | Սեմինար, գործնական | Ինքնուրույն | |
| Թեմա | Թուրքիան Առաջին Աշխարհամարտից հետո | 2 | | | Կյուրացնի Թուրքիայի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | պատմության հիմնահարցե րը 1918-1922 թթ. |
| | Քեմալական շարժում. արդյունքներ և գնահատականներ: Սևրից մինչև Լոզան. պայմանագրերի հիմնական դրույթները: Մոսկվայի և Կարսի պայմանագրերը: Ալեքսանդրետի սանջաքի և Մոսուլի վիլայեթի խնդիրները: Թուրքիան միջազգային հարաբերությունների համակարգում. Թուրքիան և Ազգերի Լիգան. Նեղուցների խնդիրը: | | | | |
| Թե մա 2 | **Թուրքիա. կայսրությունից մինչև հանրապետություն** | 2 | | | Կյուրացնի Թուրքիայում հանրապետա կան համակարգի կայացման գործընթացի հիմնահարցե րը: |
| | Հանրապետության հռչակման պատմական կոնտեքստը.կայսրությունից հանրապետություն անցման փուլերը: Մ. Քեմալի «ազգային պետության» կոնցեպցիան «վեց նետերը» որպես պետականաշինության հիմնական դրույթներ: Ռազմա-բյուրոկրատական ընտրանին որպես ազգային պետության ստեղծման շարժիչ ուժ: | | | | |
| Թե մա 3 | **Խորհրդարանականությունը Թուրքիայում** | 2 | | | Կյուրացնի Թուրքիայում խորհրդարան ական համակարգի պատմության հիմնահարցե րը: |
| | Սահմանադրությունը և խորհրդարանը Օսմանյան կայսրությունում: Խորհրդարանը երիտթուրքական շրջանում: ԹԱՄԺ-ի ձևավորումը: Օրենսդրական և գործադիր իշխանության միացումը | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ԹԱՄԺ-ում: Թուրքիայի խորհրդարանը 1960 թ. Հեղաշրջումից հետո: Թուրքիայի խորհրդարանը 1980 թ. հեղաշրջումից հետո: Արդի Թուրքիայի խորհրդարանը և պետական կառավարման առանձնահատկությունները: | | | | |
| **Թեմա 4** | **Թուրքիայի կուսակցական համակարգը** | 2 | 2 | | Կյուրացնի Թուրքիայում կուսակցական համակարգի պատմության հիմնահարցերը: |
| | Քաղաքական կուսակցությունները Օսմանյան կայսրությունում: Հանրապետական Թուրքիայի առաջին կուսակցությունները: ՀԺԿ-ի ստեղծումը: Միակուսակցական համակարգի հաստատումը Թուրքիայում: Անցում բազմակուսակցական համակարգին: Հիմնական կուսակցություններ: Քաղաքական կուսակցությունները, դրանց առաջնորդները և միջկուսակցական պայքարը արդի Թուրքիայում: | | | | |
| **Թեմա 5** | **Աշխարհիկությունը և իսլամականությունը Թուրքիայում** | 2 | | | Կյուրցնի աշխարհիկության և իսլամականության պատմության հիմնահարցերը ժամանակակից Թուրքիայում: |
| | Օսմանյան կայսրությունը որպես կրոնական միապետություն: Անցում խալիֆայությունից հանրապետություն: Քեմալական աշխարհիկության սկզբունքը: ԴԿ-ն և իսլամը: Քաղաքական իսլամի վերելքը 20–րդ դարի վերջին: Ն. Էրբաքան: Չափավոր | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | իսլամականներ: ԱԶԿ-ի ստեղծում: ԱԶԿ-ի հաղթանակը 2002 թ. ընտրություններում: ԱԶԿ-ի կառավարման գնահատական: Աշխարհիկություն – իսլամականություն դիմակայությունը արդի փուլում: | | | | |
| Թեմա 6 | Արդիականացումը Թուրքիայում | 2 | 2 | | Կյուրացնի արդիականացման քաղաքականության պատմության հիմնահարցերը Թուրքիայում: |
| | Արդիականացման փորձերը Օսմանյան կայսրությունում: Արդիականացման քեմալական կոնցեպտը: Առաջին Հանրապետություն: Երկրորդ և Երրորդ Հանրապետություն: Արդիականացումը Թ.Օզալի վարչակարգի օրոք: Եվրոինտեգրման գործընթացը և արդիականացումը ժամանակակից Թուրքիայում: Քաղաքական ազատականացման հիմնական խնդիրները: Պետություն – հասարակություն: | | | | |
| Թեմա 7 | Բանակը Թուրքիայում | 2 | | | Կյուրացնի թուրքական բանակի պատմության հիմնահարցերը հանրապետական Թուրքիայում: |
| | Բանակի տեղը և դերը Օսմանյան կայսրությունում: Ռազմական ընտրանու դերակատարումը հանրապետական Թուրքիայի կայացման գործում: Բանակը որպես քեմալականության սկզբունքների պահապան: Ռազմական հեղաշրջումները Թուրքիայում: Զինվորականություն - | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | քաղաքացիական հասարակություն դիմակայությունը արդի փուլում: | | | | |
| Թեմա 8 | **Թուրքիայի քաղաքական ընտրանին** | 2 | 2 | | |
| | «Ընտրանի» հասկացությունը ավանդական հասարակություններում (օսմանյան) և ներկայում: Թուրքիայի ընտրանու ձևավորումը 20–րդ դ. 30-40 –ական թթ.: Փոփոխություններ թուրքական ընտրանու կառուցվածքում 20–րդ դ. 50-60–ական թթ.: Թ.Օզալի կառավարումը և նոր ընտրանու բեմելը: Քեմալական և իսլամական էլիտաներ՝ համագործակցություն և շահերի բախում : Ժամանակակից Թուրքիայի քաղաքական առաջնորդներ: | | | | Կյուրացնի Թուրքիայի քաղաքական ընտրանու պատմության հիմնահարցերը: |
| Թեմա 9 | **Թուրք ազգայնականության էվոլյուցիան** | 2 | | | |
| | Թուրք ազգայնականությունը (միլլիյեթչիլիք) որպես գաղափարախոսություն /երիտթուրքերից մինչև քեմալականներ/: Միլլ իյեթչիլիք – ազգային փոքրամասնություններ փոխհարաբերությունները: Պանթուրքիզմի վերադարձը Երկրորդ Աշխարհամարտի տարիներին: Քաղաքական բազմակարծությունը և ազգայնականության նոր մեկնաբանումները 1950 – ական թթ.: ԱՇԿ- ի ձևավորումը և գաղափարախոսությունը: « Թուրք-իսլամական սինթեզ» դոկտրինը: Նեո-պանթուրքիզմ: Նեո-օսմանիզմ: | | | | Կյուրացնի թուրք ազգայնականության պատմության հիմնահարցերը: |
| Թեմա 10 | **Քրդական խնդիրը Թուրքիայում** | 2 | | | Կյուրացնի Թուրքիայում քրդական խնդրի պատմության հիմնախնդիրները: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Քրդական խնդրի առանձնահատկությունը Թուրքիայում: Քրդական հարցը հանրապետության առաջին տասնամյակում: Քրդական շարժումը 1980թ. հեղաշրջումից հետո /Թ.Օզալի վարչակարգի օրոք/: Քրդական կուսակցությունների ստեղծումը և քրդական շարժումը 1990–ական թթ.: Քրդական խնդիրը Թուրքիայում 21–րդ դ. սկզբին: | | | | |
| Թեմա 11 | **Ազգային փոքրամասնությունները Թուրքիայում** | 2 | 2 | | Ազգային փոքրամասնությունների պատմության հիմնահարցերը Թուրքիայում: |
| | «Միլլեթների» համակարգը Օսմանյան կայսրությունում: Ազգային փոքրամասնությունները հանրապետական Թուրքիայում: « 20-րդ դասակարգի զորակոչ», «Ունեցվածքի հարկ», 1955 թ. դեպքերը: Ստամբուլահայ համայնքն այսօր՝ հիմնական խնդիրներ: «Ինքնության ճգնաժամը» .մահմեդականացված և ծպտյալ հայեր: | | | | |
| Թեմա 12 | **Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները** | | | | Կյուրացնի Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների պատմության հիմնահարցերը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Թուրքիայի արտաքին քաղաքական կողմնորոշումները հանրապետության հիմնադրումից հետո: Թուրքիա –ԽՍՀՄ հարաբերությունների սրումը Երկրորդ Աշխարհամարտի տարիներին: Թուրքիա – ԱՄՆ, Թուրքիա – ՆԱՏՕ . Թուրքիան « սառը պատերազմի» տարիներին: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը «սառը պատերազմի» ավարտից հետո: Թուրքիա - ԵՄ հիմնախնդիրները: Թուրքիայի արտաքին քաղաքականության վեկտորները ԱԶԿ-ի կառավարման տարիներին: | | | | |
| **Ընդամենը՝ 32 ժամ, որից դասախոսություն 24 ժամ, սեմինար 4 ժամ, և գործնական 4 ժամ** | | 24 | 8 | | |

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 68. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 69. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 70. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| Հաճախում | Միավոր |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

01/M28. Արաբական երկրների պատմության հիմնահարցեր (20-րդ դարի վերջ-21-րդ դարի սկիզբ) (3 կրեդիտ)

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Համակողմանի ներկայացնել Մերձավոր Արևելքի արաբական երկրների նորագույն շրջանի պատմության առավել կարևոր և շրջադարձային իրադարձությունները, ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրավիճակի պայմաններում: Քննարկել այն առանցքային պատմական գործընթացները, որոնք անմիջական ազդեցություն ունեցան ոչ միայն ուսումնասիրվող երկրների վրա, այլև տարածաշրջանային զարգացումների, ինչպես նաև միջարաբական և միջազգային հարաբերությունների վրա: Լուսաբանել հետազոտվող արաբական երկրների վարած արտաքին քաղաքականության հիմնական ասպեկտները, մասնավորաբար, ԱՄՆ-ի հետ նրանց հարաբերությունների ընթացքը՝ մերձավորարևելյան հակամարտությունների համատեքստում: Ուսումնասիրել արաբական մի շարք երկրներում հաստատված կառավարման համակարգի առանձնահատկությունները, այդ երկրների ղեկավարների պատասխանատվությունը և նրանց ազդեցությունը քաղաքական, սոցիալական, հասարակական կյանքի վրա: Ապահովել գիտելիքների այն անհրաժեշտ պաշարը, որը հնարավորություն կտա տիրապետելու Մերձավոր Արևելքի արաբական երկրներում տեղի ունեցող հիմնարար գործընթացներին և այն պայմանավորող տարբեր հանգամանքներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. **կիմանա** ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արաբական աշխարհում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունների պատճառները և ուղղվածությունը,

2. **կկարողանա** ճիշտ ընկալել, վերլուծել, մեկնաբանել արաբական երկրների պատմության այս կարևոր ժամանակաշրջանի միջարաբական հարաբերությունների առանձնահատկությունները, արաբական երկրների համար առանցքային նշանակություն ունեցող գործոնները,

3. **կտիրապետի** ուսումնասիրվող Արաբական երկրների վարած արտաքին քաղաքականության ուղղվածությանը, արևմտյան երկրների հատկապես ԱՄՆ-ի հետ նրանց հարաբերություններին: Բացի այդ ուսանողները կտիրապետեն մերձավորարևելյան, մասնավորաբար, արաբա-իսրայելական հակամարտության այս ժամանակաշրջանի զարգացումներին: Դրա հետ մեկ տեղ կկարողանան ճիշտ վերլուծել ու ընկալել հետագա տարիների պատմական զարգացման ուղին, անմիջական կապ տեսնելով անցյալի և ապագայի պատմական գործընթացների միջև:

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապմունքի տիպը ժամերի թիվը | | |
|---|---|---|---|---|
| | | դասախո-սություն | սեմինար, գործնական | Վերջնարդյունք |
| | ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | | | |
| Թեմա 1 | Սիրիայի հարաբերությունները արաբական երկրների հետ և տարածաշրջանային համագործակցությունը | 2 | | Կյուրացնի Սիրիայի հարաբերությունները արաբական երկրների հետ և տարածաշրջանային համագործակցությունը թեման: |
| | Սիրիային արտաքին քաղաքակնության առաջնային ուղղություններից մեկը ուսումնասիրվող ժամանակաշրջանում դարձավ արաբական երկրների հետ հարաբրությունների ամրապնդումը և զարգացումը: Առավել ակտիվ էին հարբերությունները Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի և Իրաքի հետ: Սիրիան կարևորում էր տարածաշրջանային համագործակցության հատկապես տնտեսական գործոնը: | | | |
| Թեմա 2 | Սիրիայի հարաբերությունները Թուրքիայի և Իրանի հետ Բաշար ալ-Ասադի կառավարման առաջին տարիներին: | 2 | | Կյուրացնի Սիրիայի հարաբերությունները Թուրքիայի և Իրանի հետ Բաշար ալ-Ասադի կառավարման առաջին տարիներին թեման: |
| | Սիրիայի նախահ Բաշար ալ-Ասադի վարած արտաքի քաղաքականության մեջ առանցքային նշանակություն ուներ հարաբերությունների բարելավումը իր անմիջական հարևաններ Թուրքիայի և Իրանի հետ: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ի տարբերություն Իրանի, որի հետ Սիրիան ուներ ավանդաբար լավ հարաբերություններ, թուրք-սիրիական հարաբերությունները համեմատաբար լարված էին քանի որ երկու երկրների միջև առկա էին տարածքային խնդիրներ, ինչպես նաև տարածաշրջանային որոշ խնդիրների նկատմամբ ունեին իրարից տարբերվող, հակասական մոտեցումներ: Բայց և այնպես նրանց հաջողվեց արձանագրել հարաբերությունների որոշակի բարելավում, ինչը սակայն երկար չտևեց: | | | |
| Թեմա 3 | **Քեմպդևդյան համաձայնագրերն ու եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագիրը** | 2 | | Կյուրացնի Քեմպդևդյան համաձայնագրերն ու եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագիրը թեման: |
| | 1979 թ. մարտի 26-ին ստորագրված եգիպտա-իսրայելական հաշտության պայամանգիրը նոր իրադրություն ստեղծեց Մերձավոր Արևելքում: Նոր փուլ ձևավորեց արաբա-իրայելական հակամարտության զարգացման մեջ: Պայամանագրի ստորագրումը ոչ միայն մեկուսացրեց Եգիպտոսը արաբական աշխարհից այլ նաև, փաստորեն, Սիրիային միայնակ թողեց արաբա-իսրայելական առճակատման մեջ: Վերանայվեցին նաև արաբական երկրների հարաբերությունները | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Միացյալ Նահանգների հետ՝ մեղադրելով վերջինիս հակաարաբական քաղաքականության մեջ: | | | |
| Թեմա 4 | Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա | 2 | 2 | Կյուրացնի Իրանի իսլամական հեղափոխության ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա թեման: |
| | 1978-1979 թթ. տեղի ունեցած Իրանի իսլամական հեղափոխությունը միանգամայն նոր իրավիճակ ստեղծեց տարածաշրջանում: Շահական ռեժիմի տապալումը, իսլամական հեղափոխության հաջողությունները և նրա արտահանման կոչերը տագնապի մթնոլորտ ստեղծեցին Ծոցի արաբական երկրների միապետական վարչակարգերի մոտ, հիմք դնելով տարածաշրջանային նոր զարգացումների: | | | |
| Թեմա 5 | Ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդ | 2 | | Կյուրացնի Ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդ թեման: |
| | Իսլամական հեղափոխության և իրանա-իրաքյան պատերազմի պատճառով ստեղծված ճգնաժամը դրդեց Ծոցի արաբական վարչակարգերին, որոնք մեծապես շահագրգռված էին իրենց երկրների և ողջ տարածաշրջանի անվտանգության | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | խնդրով, առանձին առանձին և համատեղ ձեռնարկցին մի շարք կարևոր միջոցառումներ, որոնք նպատակաուղված էին տարածաշրջանում իրական սպառնալիքի և նրա անցակալի հաետևանքների կասեցմանը: Այդ իսկ պատճառով վերջիններս հիմնադրեցին Ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդը: | | | |
| Թեմա 6 | Բանակի դերը Մերձավոր Արևելքի արաբական երներում | 2 | | Կյուրացնի Բանակի դերը Մերձավոր Արևելքի արաբական երներում թեման: |
| | Մերձավոր Արևելքի արաբական երկրներում բանակը ակտիվորեն մասնակցում է երկրի հասարակական կյանքի գործընթացնում: Ռազմա-քաղաքացիական հարաբերությունների առանձնահատկությունն երը մեծամասամբ կանխորոշում են արաբական աշխարհում ընթացող հիմնական քաղաքական գործընթացների յուրօրինակությունը: Զինվորականների իշխանության գալը, ինչպես, օրինակ Եգիպտոսում, Սիրիայում, Իրաքում և մի շարք այլ արաբական երկրներում օժանդակեց ներքաղաքական կայունության ամրապնդմանը և ներքին երկպառակության վերացմանը: | | | |
| Թեմա 7 | Նավթային գործոն | 2 | | Կյուրացնի Նավթային գործոնը թեման: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Նավթային գործոնը կարևոր և առանցքային տեղ է գրավում նավթարդյունահանող երկրների արտաքին կապերի ձևավորմանը, և անմիջական ազդեցություն է ունենում այս պետությունների միջազգային, տարածաշրջանային խնդիրների դիրքորոշման վրա: Նավթի օգտագործումը որպես «զենք» համաարբական խնդիրների լուծման համար, տվեց իր արդյունքները, և ցույց տվեց որ նավթային էմբարգոյի կիրառումը կարող է լուրջ տնտեսական ցնցումների հանգեցնել: | | | |
| Թեմա 8 | **Մերձավոր Արևելքի արաբական երկրների հարաբերությունները Խորհրդայի միությանհետ հետ** | 2 | | **Կյուրացնի Մերձավոր Արևելքի արաբական երկրների հարաբերությունները Խորհրդայի միության հետ թեման:** |
| | Արաբական աշխարհում Խորհրդային միության նկատմամբ վերաբերմունքը շատ հակասական էր: Խորհրդային միությունը, ինչպես նաև ԱՄՆ ձգտում էին իրենց գերակայող դիրքերը հաստատել տարածաշրջանում: Արաբական մի շարք երկրներ ինչպիսիք Սիրիան, Իրաքը, Եգիպտոսը, սերտորեն համագործակցում էին Խորհրդային միության հետ ոչ միայն տնտեսական և | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | քաղաքական այլև ռազմական ոլորտներում: Բացի այդ Խորհրդային միությունը աջակցում էր իր դաշնակիցներին նաև արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման գործում: Փաստորեն, արաբական աշխարհը բաժանվել էր երկու ճամբարի, որն իհարկե իր բացասական ազդեցությունն էր ունենում միջարաբական հարաբերությունների վրա: | | | |
| Թեմա 9 | Եգիպտոսը Հոսնի Մուբարաքի կառավարման օրոք | 2 | 2 | Կյուրացնի Եգիպտոսը Հոսնի Մուբարաքի կառավարման օրոք թեման: |
| | Եգիպտոսը Մուբարաքի նախագահության շրջանում հավասարկշռված արտաքին և ներքին քաղաքականություն էր վարում: Եգիպտոսը շարունակում էր ԱՄՆ-ի հետ բարեկամական կապեր պահպանել և խորացնել՝ համագործակցելով տարբեր ասպարեզներում, հատկապես, մերձավորարևելյան հիմնախնդիրների լուծման բնագավառում: Մուբարաքին հաջողվեց վերականգնել դեռևս Սադաթի օրոք աղված/խզված դիվանագիտական հարաբերությունները արաբական երկրների հետ, վերականգնել Եգիպտոսի անդամակցությունը Արաբական պետությունների | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | լիզայում: | | | |
| Թեմա 10 | ԱՄՆ-ի ներխուժումը Իրաք և դրա ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա | 2 | | Կյուրացնի ԱՄՆ-ի ներխուժումը Իրաք և դրա ազդեցությունը տարածաշրջանային զարգացումների վրա թեման: |
| | 2003 թ. մարտին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ձևավորված կոալիցիոն ուժերը, որի մեջ մտնում էին Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներ միացյալ Նահանգների գլխավորությամբ ռազմական գործողություններ սկսեցին Իրաքի դեմ: Իրաքի պարտությունը, ամերիկյան զորքերի հայտնվելը տարածաշրջանում մեծապես ազդեց արաբական երկրների թե՛ ներքին կյանքի տարբեր բնագավառների, և թե՛ արտաքին քաղաքականության վրա՝ փոխելով ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում ու ստեղծելով միանգամայն նոր աշխարհաքաղաքական դրություն: | | | |
| Թեմա 11 | Լիբանանի ներքաղաքական իրավիճակը 21 դ. սկզբին | 2 | | Կյուրացնի Լիբանանի ներքաղաքական իրավիճակը 21 դ. սկզբին թեման: |
| | 2004 թ. կրկին լարվեց ներքաղաքական իրադրությունը Լիբանանում: Երկրի քաղաքական ուժերի մեծամասնությունը պահանջում էր Լիբանանից դուրս բերել սիրիական զորքերը, որի կողմնակիցն էր նաև | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վարչապետ Ռաֆիկ Հարիրին: Իրադարձությունների հետագա վատթարացումը, Ռաֆիկ Հարիրիի սպանությունը, միջազգային հանրության ճնշումները ի վերջո հարկադրեցին Սիրիայի դուրս բերել իր զորքերը Լիբանանից: | | | |
| Թեմա 12 | Մերձավոր Արևելքը Արաբական գարնան նախօրեին | | | Կյուրացնի Մերձավոր Արևելքը Արաբական գարնան նախօրեին թեման: |
| | Արաբական երկրներում առկա սոցիալական, հասարակական, քաղաքական, ինչու չէ նաև արևմտյան պետությունների ազդեցությունը, հիմնական պատճառներից դարձան Մերձավոր Արևելքում հեղափոխական շարժումների ծավալման համար: | | | |
| Թեմա 13 | Միացյալ Նահանգների և Ռուսաստանի դաշնության վարած քաղաքականությունը Մերձավոր Արևելքում | 2 | 2 | Կյուրացնի Միացյալ Նահանգների և Ռուսաստանի դաշնության վարած քաղաքականությունը Մերձավոր Արևելքում թեման: |
| | Համեմատական վերլուծության ենթարկել ԱՄՆ և Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքականությունը, տարբեր վարչակարգերի տարածաշրջանային զարգացումների և հակամարտությունների համատեքստում, հաշվի առնելով այն կարևոր դերակատարությունը և ազդեցությունը որ ունեն այս երկու երկրները | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | արաբական աշխարհի պատմական զարգացման վրա: | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ 32 ժամ, 3 կրեդիտ | | 26 | 6 | |

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 71. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 72. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 73. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

**Հարակից ծրագրերի ընտրովի դասընթացներ**

**01/M37. Քրդական հիմնախնդիրը Մերձավոր Արևելքում (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին համապարփակ գիտելիքներ փոխանցել այսօր Մերձավոր Արևելքի գլոբալ հիմնախնդիրներից մեկի՝ քրդական հարցի շուրջ ընթացող աշխարհաքաղաքական զարգացումների վերաբերյալ: Ծրագրի արդյունքում ուսանողը ձեռք կբերի մասնագիտական գի-

տեյիքը նորացնելու և փոխանցելու, նոր գաղափարներ առաջ քաշելու, գիտելիքի որակի մասին հոգածության, թիմում աշխատելու, նախագիծ պլանավորելու, իրականացնելու և պաշտպանելու ընդհանրական կարողություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

***Կիմանա***

- քրդական հիմնախնդրի ծագման և ձևավորման պատմաքաղաքական դրդապատճառները, քրդական ազգային շարժման ձևավորման հիմնական փուլերը զարգացման առանձնահատկությունները
- քրդական հիմնախնդրի դերն ու նշանակությունը տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրի ներքաղաքական կյանքում և արտաքին հարաբերությունների համատեքստում
- վերլուծել Մերձավոր Արևելքում քրդերի սոցիալ-քաղաքական վիճակի, նրանց պայքարի պատմական նշանակության և այսօր առկա խնդիրների միջև
- քննարկել տարածաշրջանի քրդաբնակ շրջաններում իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության շրջափուլերը, կիրառված տնտեսական և քաղաքական լծակների միտումները և հետևանքները
- համեմատել այս երկրներում քուրդ հասարակության կենսական, քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը
- ներկայացնել քրդական գործոնի քաղաքական ներուժը, գնահատել տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումներում, միջպետական հարբերություններում քրդական գործոնի կարևորությունը, քրդական տարբեր ազդեցիկ կառույցների վարած քաղաքականության ուղենիշներն ու միջպետական հարաբերությունների առանձնահատկությունները
- վերլուծել Մերձավոր Արևելքում միջքրդական հակամարտությունները, քրդերի էթնոդավանական ներքին հակասությունների բնույթն ու դրդապատճառները, որոնք սահմափակում և խոչընդոտում են քուրդ ժողովրդի ազգային ինքնության և պետականության կայացումը
- գնահատել «քրդական հարցի» հանգուցալուծման հեռանկարները հնարավոր քրդական պետականության տեսլականի վերաբերյալ, քրդական տարածաշրջանային քաղաքականությունը՝ Մերձավոր Արևելքում ընթացող քաղաքական վերջին զարգացումների համատեքստում

**2. Կկարողանա**

- օգտվել տարածաշրջանին առնչվող տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, փաստացի նյութերից օգտվելու տեխնիկական հմտություններից
- կիրառել գիտահետազոտական աշխատանքի մեթոդներն ու կանոնները:
- պատրաստել թեմային առնչվող զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել քննարկում

**3. Կտիրապետի**

- Մերձավոր Արևելքում քրդերի պատմությանը, դրա հաջողություններին ու ձախողումներին, առանց որոնց համապարփակ ուսումնասիրության

հնարավոր չէ հասկանալ այսօր մերձավորարևելյան ամենահանգույցային խնդիրներից մեկի էությունը

- համակարգված գիտելիքների՝ Մերձավոր Արևելքում քրդական խնդրի առանձնահատկությունների և տարածաշրջանում իրականացվող քրդական քաղաքականութան վերաբերյալ

կիրառական ունակությունների՝ տարածաշրջանում ընթացող կոնֆլիկտների իրավիճակային վերլուծության համար

**Բովանդակությունը.**

| N | Բաժինը, թեման | Պարապունքների տիպը, ժամերի թիվը | | | Վերջնարդյունք |
|---|---|---|---|---|---|
| | | Դասախոսություն | Սեմինար, գործնական | Ինքնուրույն | |
| **Թեմա 1** | **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ Քրդական հիմնախնդրի ձևավորման պատմությունը** | 1 | 1 | | Կիհասկանա Քրդական հարցի ձևավորման պատմությունը |
